Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՍեՐեՔ
56

1 5/82

2002

56

# ԳԻՏՈՒԹԻՒՆ ՇՆՈՐՀԱՑ:

(Եւ եւ այս իմաստութեան է ճա-
նաչել թէ յումմէ՛ է շնորհն
Իմաստ. Սող. Ը. 21:)

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ:

Մովսիսի Զօհրապեանց:

### Ի ՇԱՄԱԽԻ:

Ի Տպարանի երից ընկերացն Մովսիսի
Զօհրապեանց, Մինասի Տաղլեիջեանց
և Մարգարէի Գուլեանց:

1851 — ՌՅ

23061

Печатать позволяется съ тѣмъ, чтобы по напечатанiи было представлено узаконенное число экземпляровъ въ Кавказскiй Ценсурный Комитетъ. Тифлисъ, 1850 года Генваря 22 дня.

*Ценсоръ Надворный Совѣтникъ Д. Арзановъ.*

(4 4 52
41)

56-200
Լբ 55

# ԶՀՈԳԻՆ ՄԻ՛ ՇԻՋՈՒՑԱՆԷՔ։ [*]

Աստուած յօրէնս իւր, տուեալս Նախամարգարէին Մովսիսի խօսի ընդ այսմ. „Եւ դու պատուիրեսցես որդւոցն Իսրայէլի, և առցեն քեզ ձէթ 'ի ձիթենեաց, պարզ, սուրբ, խակակուտ, 'ի լոյս. զի եղիցի ճրագ հանապազորդ" (1) Բանիւս պատուիրանագրութեան Նա հրամայէ Մովսիսի, զի յօրինեսցէ աշտանակն, յորոյ վերայ եղեալ էին եօթն ճրագարան 'ի խորանին, այրեսցի անընդհատ իւղ մաքուր," և լուցանիցէ զնա Ահարոն և որդիք իւր յերեկորեայ մինչև ցառաւօտ առաջի Տեառն։ (2)

Այս կազմակերպուն աշտանակի յաներկբայս կերպարանէր զգերագոյն և

---

*] Ա Թեսաղ. Ե. 19։

գ խորհրդաւոր ինչ: Գլխաւոր նպատակ Ամենաբարձրելոյն էր այն, զի ցուցցէ ժողովրդեան իւրում, թէ նա պաշտօն, որ մատուցանի նմա՝ յայնժամ միայն ունի հաճոյանալ, երբ կատարի այն հոգւով եւ ճշմարտութ՟, բոյակէղ ջերմեռանդութ՟, պաշտօնասիրութ՟, սիրալիր սրտիւ եւ անկեղծութ՟:

Յայս ձեւ Ճրագարանին խորհրդական ակնարկութ՟ իմացեալ լինէր Հոգին սբ՟, թէ ը՟ յատկական բնաւորութեան իւրում, եւ թէ ը՟ փրկարար զօրաւոր ներգործութեան իւրոյ: Աստուածաշունչ գիրք բազմիցս յանդիման կացուցանեն զազգի ազգի ձեւս Հոգւոյն սրբոյ ՚ի նմանութ՟ իւղոյ եւ հրոյ, ը՟ որում սաղմոսերգու Մարգարէն Դաւիթ ասէ.” Վ՟ս այսորիկ օծ զ.քեզ Ա՟ծ Ա՟ծ քո իւղով ուրախութ՟“: (3) Ըստ այսու օրինակաւ իւղոյ եւ ը՟ Առաքեալն Պետրոս բացատրէ զներգործութիւն Հոգւոյն սրբոյ: ( գործ Ժ. 58. ) Եւ ՚ի

տեսակ հրոյ Հոգին սբ էջ յառաքեալսն ,,և երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև ՚ի հրոյ՚՚: (4)

Հոգին սբ կարի իրաւացի և պատշաճապէս կերպարանի ՚ի տեսիլ հրոյ և իւղոյ: Իբր զի որպէս առաջինն ունի զյատկութիւն լուսաւորելոյ, կիզանելոյ և աւերելոյ, իսկ վերջինն զզօրութ կակղացուցանելոյ, ապաքինելոյ և կենագործելոյ, նոյն և ներգործութիւնք Հոգւոյն սբյ ունին զայսոսիկ տարբեր յատկութիւնս: Նա է Լոյս, լուսաւորիչ սրտի մարդոյ ՚ի ճշմարիտ գիտութ Հօր Այ, փրկչին և ինքեան: Նա նման հրոյ թափանցանէ ՚ի ներքս մարդկային հոգւոյ և քամահէն լսողանէ զնա ՚ի մեղս, ճմլեցուցանէ զսիրտ մարդոյ իբրև զհուր, վառէ յայնմիկ զլոյս հաւատոյ ՚ի Յս Քս, և բորբոքէ ՚ի հաւատացեալս զեռանդուն և զխանդակաթն առ Նա սէր: Համգոյն հրոյ մտեալ մաքրագործէ զսիրտս նոցա

յամենայն գործս աղտեղութեանց ընդաբոյս մեղաց. և դարձուցանէ ՚ի ճանապարհ ճըշմարտութեան և լուսոյ: Նա խրախուսէ զնոսա ՚ի դիպուածս վհատութեան և կենդանացուցանէ զհոգիս նոցա. յաղօթելն վերածնէ ՚ի սրտի զջերմեռանդ զպաշտմունս և շնորհէ զհաստատութիւն և զհամբերութիւն:

Զօրութիւնք Հոգւոյն Սրբոյ ոչ միայն համանման են հրոյ, այլ և կակղացուցիչ և կենդանարար իւղոյ, որ բուժէ զվէրս հոգւոյ: Այս լինի՝ երբ նա ձօնէ հրաւիրելոց հաստատել հաւատովն ՚ի Յիսուս Քրիստոս զթողութիւն մեղաց, զհաշտութիւն ընդ Աստուծոյ և զհաղորդութիւն Հոգւոյ Սրբոյ ՚ի նոսին, և երբ հեղու ՚ի նոսա զներքին մխիթարութիւն և զհաւաստութիւն, թէ նոքա ընդունելի եղեն ՚ի փրկիչն Քրիստոս: Վառումն ՚ի քահանայից ոսկեայ ճրագարանացն այնոցիկ ոչ ապաքէն մե՛կն և պարզ ՚ի տիպ կացուցանէ զկենարար զօրութիւն Հոգւոյն Սրբոյ, որով վերա-

ծէ զմեզ 'ի խաւարէ 'ի լոյս, 'ի մահուանէ 'ի կեանս:

Այս Ճրագ, որ պարտէր զտիւ և զգիշեր այրել անդադար՝ նշանակէր, թէ որ եղեն հաղորդակից շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ վայելեսցէ զնոյն 'ի դար յաւիտեան, և նա՝ յայնմ՝ հետէ ոչ զըրկեսցի 'ի մխիթարչէս յայսմանէ: Նա բնակեսցի 'ի նմա, եղիցի զօրհանապազ ընդ նմա և պատրաստեսցէ զնա 'ի մշտնջենական բարութիւնն: Ո՛վ անգին պարգևացս:—

Որպէս ը̅ ուխտին հնոյ կտակի պարտ էր քահանայից ճիշտ զգուշութ̅ և դիտողութ̅ ջանալ, զի մի՛ շիջանիցին ճըրագունքն յաշտանակին, նոյնպէս և հաւատացեալք նորոյս կտակի պարտին աչալուրջ արթնութ̅ և տքնիլ և պէտ յանձին կալեալ քաջաջան լինել առ 'ի զՀոգւոյն սրբոյ զներգործութիւն յինքեանս պահել, զհրաւիրանաց նորա երթալ զկնի, և մի՛ յանհոգս շիջու-

ցանել զնա, զի մի՛ ազդեցուլիք նորա մնասցեն վասն նոցա ապարդիւն և անպտուղ:

Սրբազան առաքեալն Պօղոս առ այս իսկ վախճան զայս օրինակ եռանդագին հրաւիրէ զհաւատացեալս 'ի Սելանիկի [Թեսաղոնիկէ], ասելով 'ի թղթին իւր առ նոսա: Ա. Թեսաղ. Ե. 19:

### Զհոգին մի՛ շիջուցանէք:

'Ի բանի աստ մեք պարտիմք քննել. նախ զայն, զորմէ աստ առաքեալն խօսի, այն է զՀոգին, և երկրորդ՝ զխրատական յորդորումն թելադիր, զոր նա ը̃ այն յարէ, մի՛ շիջուցանէք:

Արդ՝ առաքեալն Պօղոս յառաջին թղթին իւր առ Թեսաղոնիկեցիս չունէր զայլ ինչ նպատակ, այլ միայն քաջալերել զնոսա 'ի քրիստոնէութ., յոր կոչեցեալ էին քարոզութ. Աւետարանին, կեալ և մնալ միշտ հաստատուն և ան-

խախտ, և անյայտանել, թէ նոքա, որք եղեալ էին հետևող Յսի Քսի սրբոյն ոչ մեկնել 'ի նմանէ և ոչ 'ի ժամանակի իսկ թշուառութեանց և տառապանաց, այլ ընդ հակառակն յաւելուլ ևս զսէր իւրեանց առ նա և օրինակաւ սորին Առաքելոց թեւադիր լինել անձանց և հաստատել 'ի դիտութեան Աւետարանին: Որ համոզէ զնա 'ի կատարել զպէսպէս հոգևորական պարտաւորութիւնս, 'ի բարեպաշտ և յԱծահաճոյ կեանս, ուսուցանելով նոցա ոչ զկանոնս և եթ, այլ և զհնարս և զեղանակս իսկ 'ի հաստատուն և 'ի կատարելագործութիւն յառաջխնութիւն: Ընդ կանոնս այսորիկ նոյն և դասելի է զընտիր ստացուածն որ ունի զկաթողիկոն Առաքելոյն ըղձայն յորդորանաց առ ամ քրիստոնեայս, այն է՝ մի՛ շիջուցանել զհոգին, և կեալ 'ի պատշաճ և յարժանին շնորհալի ներգործութեանց նորա կարգի:

Ապաքէն մատիցո՛ւք այժմ 'ի քննելն, նախ՝ թէ զի՛նչ ցուցանէ Սուրբն Պօղոս բառիւս՝ Հոգի։

Իւրաքանչիւր ոք դիւրեաւ կարէ տեսանել, զի առաքեալն՝ խօսելով աստ զՀոգւոյն, իմացուցանէ զՍուրբ Հոգին, զԵրրորդ անձնաւորութիւն ամենասուրբ, համագոյակից Երրորդութեանն։

Չէ՛ մեզ հարկ աստանօր մտանել 'ի մանրամասն զննելն և խորհրդածութիւն զէութենէ Հոգւոյն սրբոյ Աստուծոյ, և զելմանէ նորին 'ի Հօրէ, որ ո՛չ անկանի ընդ մտօք, այլ կարճ 'ի կարճոյ խօսեսցուք զայնմանէ՝ որ Հոգի է։

Հոգի բառս՝ հայելով 'ի բուն իմաստ իսկութեան, նշանակէ զշնչումն և զփըչումն հողմոյ։ Բայց այն նմանապէս 'ի կիր ածի, երբ խօսիմք զգոյացութենէն Աստուծոյ. վասն զի չի՛ք պատշաճագոյն և յատուկ ա՛յլ ինչ բառ, որով մարթ լինէր արտաբերել զԵրրորդ անձն Աստուածութեան, որպէս բառիւս Հոգի,

որ մերձ ընդարձակաբար առնուլ նշանակէ զԱ՟ծ ՚ի բոլոր յերիս դէմս, ուստի ասի, թէ "Հոգի՛ է Աստուած"։ (5) Այլ յատկապէս ՚ի սուրբ գիրս ՚ի կիր արկանի բառս Հոգի առ ՚ի նշանակել զերրորդ դէմն ամենասուրբ Երրորդութե՟ն, յարելով ընդ այն առանձին ըղ. բառս Սուրբ, ըստ Մատթ. Իը. 19։

Բազմադիմի են պատճառք, որով երրորդ դէմն գոյացութե՟ Ա՟յ յորջորջի Հոգի. և նախ յատկութիւք էութե՟ նորին, որպէս Ա՟յ. երկրորդ բղխմամբ նորա ՚ի Հօրէ՝ որոյ վասն և անուանի "շունչ Ամենակալին. (6) և Հոգի բերանոյ նորա": (7) Հոգի կոչի և ըստ պատկերի ներգործութե՟ իւրոյ, սմին իրի հանգունանայ եւ "հնչման սաստիկ հողմոյ։ (8) Վ՟նկ երբ փրկչին կամ եղև շնորհել առաքելոցն զՀոգին որ՝ ՚նա փչեաց ՚ի նոսա։ (9) Հոգի անուանի եւ ՚ի պատճառս հոգևոր և բարերար ներգործութեանց իւրոյ, որգոն. "վերածնութե՟

կենդագործութեան, հաստատութեան եւ սրբու-
թեան", եւ ընդ օրինակին, որով նա ար-
տաքրէ զներգործութիւնս զայսոսիկ ՚ի
մարդ: "Հոգի՝ ուր կամի շնչէ. սոյնպէս
եւ ամ ծնեալն ՚ի Հոգւոյն": (10)

Այլ ո՛չ միայն այնորիկ Հոգին այս
կոչի սբ, որպէս թէ սուրբ իցէ քան
զմիւս դէմս Ածուն: Նա ունի զնոյն
իսկ սրբութիւն, որպէս Հայր եւ Որդի,
այլ այնու աղագաւ միայն, զի զդար-
ձեալ սրբէ եւ ՚ի սրբութիւն կատարելա-
գործէ, ընդ որում ասի ՚ի Թուղթն առ
Հռոմ. Ժե. 16. "սրբեալ Հոգւովն սըր-
բով," Բ. Թեսաղ", Բ. 12. սրբութբ
Հոգւոյն:"

Ասացաւ մեօք ՚ի վերոյ, թէ բառիս
Հոգի՝ բազմիցս իմացեալ լինին նա եւ
բարերար ներգործութիւնք Հոգւոյն սբյ
յայս իսկ միտս դնի եւ բան առաքելոյն.
զՀոգին մի՛ շիջուցանէք:

Աստանօր գիտելի է միայն, զի բա-
ռիս՝ զՀոգին մի՛ շիջուցանէք, իմա-

ցեալ լինի յայտնապէս, թէ Հոգին Սբ
ներկայանայ և բնակի 'ի հաւատացեալս,
երբ 'ի տաճարս իւր, այլ թէ ոչ՝ կա-
րէ՞ր ոք արդեօք շիջուցանել զնա. Իսկ
գուցէ և ոմանք առարկիցեն, զիա՞րդ
պարտէ հասու լինել բնակութեան այս-
միկ: Պատասխանի է 'ի մէնջ սոյնպիսի
հարցասիրաց, թէ աստ ոչ պիտի բնա-
կութիւն Հոգւոյն սրբոյ միայն իմանալ
զներկայութիւն նորա, որպէս ամենայայր
Աստուծոյ, և ոչ զբաշխումն և նմ
շնորհաց նորա, զորօրինակ՝ հաւատոյ,
յուսոյ, սիրոյ և այլոց նմանեաց, այլ
և թէ Հոգին սուրբ բնակէ կամ ներ-
գործէ և միաւորի ընդ հաւատացելոց
օրինակաւն, որ յատուկ է նմա, իսկ
մեզ անհաս իբրև գերբնական և անճա-
ռելի, ըստ որում ցուցեալ է մեզ 'ի սբ
գիրս յայլ և այլ ամենազդու վարձա-
ռութիւնս:

Չէ՛ պարտ նա՞ և [իմանալ, որպէս թէ
Հոգին սուրբ բաժանեալ իցէ մարդկան

զմատն գոյութեան նորա Աստուածայնոյ: Ո՛չ նոյն և ո՛չ իսկ զայն, թէ իմ՛ գործք հաւատացելոյ էին գործողութիւնք Հոգւոյն սրբոյ. զի յայնժամ անմա՛րթ լինէր տեսել, թէ մարդ աղօթէ, հաւատայ, յուսայ և այլն, այլ Հոգին սբ: Աստուած և ո՛չ այն, թէ Հոգին սուրբ միայնակ իցէ ընդ հաւատացելոյ այնպէս որպէս Աստուածային բնութիւն Քրիստոսի միաւորեալ էր ընդ մարդկայնոյ: Այլ բան մեր է, թէ նա ըստ հաստատելի մեզ, իսկ նմա միայնում յատկացեալ յատկութեան և ներգործութեամբն բնակի 'ի հաւատացեալս: Ո՛վ քանի մեծ է արտօնութիւն առանձնաշնորհութեանս, որում արժանացեալ են քրիստոնեայք: Յիրաւի՛ է, որ ասի ըզ մէնջ 'ի գործս առաքելոց գլ. ժէ. 29. ”Թէ ազգ եմք Աստուծոյ“: Որպէս և յետագայ տեղիք սուրբ գրոց պարզապէս ապացուցանեն զնոյն. Յով. Ժդ. 16. 17”: Նա աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ

բնակեսցէ 'ի յաւիտեան: Զհոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա՝ և ոչ ճանաչէ զնա: Բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի": Նոյնպէս և սուրբ Առաքեալն Պօղոս վկայէ, թէ հաւատացելոց, առ որս գրէ՝ ունին զՀոգին Սբ, 'ի հարցանելն: "Ո՞չ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ, և Հոգի Աստուծոյ բնակեալ է 'ի ձեզ": (11) Նոյն և առ Հռովմայեցիս, (12) և յայլում վայրի, "Այսուհետև որ անարգէ, ոչ զմարդ անարգէ. այլ զԱծ՝ և որ ետ զՀոգին Սբ 'ի ձեզ": (13)

Սուրբն Պօղոս 'ի խրատելն, զՀոգին մի՛ շիջուցանէք՝ ունի զգլխաւոր ինքեան կէտ նպատակի զշնորհալի ներգործութիւնս Հոգւոյն սրբոյ: Իսկ արդ՝ առ 'ի պարզագոյն ևս ցուցանել զայս թելադրութիւն Առաքելոյն, չմտանելով յաւելորդ հանգամանս՝ քննեսցուք զերե-

ւելի ներգործութեամբ Հոգւոյն սրբոյ 'ի մեզ, և այնուհիկ բայերևս տեսցուք, թէ որպիսի՞ օրինակաւ հնար է շիջուցանել զՀոգին։

## Ա.

Ա̃ծային լուսաւորութիւնն է պարգև Հոգւոյ Սրբոյ, պարգև՝ որով լուսընկալ լինի նսեմացեալ և խաւարազգած միտք մեղաւորի 'ի բնական վիճակի 'ի գիտութիւն հոգևոր առարկայից, յ̃՝ 'ի գիտութիւն Հօր Աստուծոյ, Յ̅ի Ք̅ի, իբրև միայնակ միջնորդի մերոյ և ինքեան իսկ, և առ 'ի գիտել զբնութիւն իւրոյ զապականութիւն և զկորստական վիճակ Հոգւոյն։ Հոգին սուրբ վասն այնր կոչի և Լոյս, զի նա ո՛չ միայն ինքն յինքեան է Լոյս Աստուածային, այլ զի և 'ի սրտի մեղաւորի համատարած ծաւալէ զԼոյս և շնորհէ զնորոգ կեանս, մինչ մարդ յերևան հանէ պարզապէս և իմանայ

ննջեցին զայն, զոր նախ ոչ տեսանէր երբեք: ՚Ի ձեռն լուսոյ այսորիկ բացերևակի նշմարէ նա զսրբութի՛, զարդարադատութի՛, զամենակարողութի՛ և զիմաստութի՛ն Աստուծոյ: Եւ ընդ նմին հաւատովք առնէ անձին, զիւր սեպհական տկարութի՛ն, և զթուլութի՛ առ հասարակ ա՛մ ստեղծական եղանակաց, մինչ զի կորուսեալ անհետ առնէ զա՛մ զապաւէն ՚ի զօրութե՛ն իւր և ընդագոյն բանադատի, թէ խաչ ելեալն Քս՛ է միայն հնար փրկութե՛ և միջոյ որդէգրութե՛ նորա Հօր Ա՛յ: Այն այս զգացուսմ առնէ վասն նորա զփրկիչն Քս՛ մեծագին և անհամեմատ առարկայ, և ոչ ևս ՚ի յոյզ և ՚ի քննին լինի խմք բայց ՚ի միայնակ զթուէ փրկչին:—

Բ:

Ճշմարիտ և փրկարար հաւատն է նմանապէս ներգործուի Հոգւոյն սրբոյ:

Այս հաւատ ծնանի զայն, զի մարդ՝ յանդիմանեալ 'ի մեղանչականութենէ իւրում և տեսեալ զինքն 'ի կորստական և յանապաւէն վիճակի՝ քաջալերեալ վստահանայ ըստ հրաւիրման և կոչման Աւետարանի դիմել աներկբայ յուսով և սիրալիր սրտիւ առ Քն, իբրև 'ի մի միայն միջնորդ, մխիթարիչ և փրկիչ, հաշտիլ ընդ Աստուծոյ արեամբ Քնի, որ հեղաւն վասն մեղաւորաց փրկուե՛, և ստանալ զթողուլ̃ի մեղաց, և յուսայ արժանանալ երանաւէտ կենացն յաւիտենից։ Զհաւատս զայս 'ի գոյ ածէ Հոգին սուրբ 'ի մարդկային սրտի միջնորդութ̃ Աւետարանի, որոյ աղագաւ կոչի այն հոգի հա—ւատոյ։[14] Առանց հաւատոյս այսորիկ ո՛չ ոք կարէ սիրել և գիտել զՔնի գերօրինակ մեծագնուլ̃ին· և ներհակ սմին՝ որ ո՛չ ունի զջերմեռանդն առ նա սէր, ո՛չ կարէ ունիլ զհաւատ ճշմարիտ։ 'Ի սկզբանէ հաւատն լինի կարօտ, հետայոյզ ապա-

տանի և զօրավիգն ձեռնտուի, ապա ընդունակ, իսկ 'ի վերջնումն հաստատուն, յուսապատար ակնկալու և տէրապէս սեպհականիչ:—

## Գ.

Յօժարամտութի և կամակարութի սրտի առ հոգևորս է նոյնպէս ներգործութի Հոգւոյն սրբոյ: Սիրտ մարդկային ըստ ապականութե բնութեն՝ ունի զյատկութի մարմնական, և լի է ամ̃ ունայն և մեղսակեր ցանկութք: Հոգին սուրբ արարչական զօրութ իւրով յառաջնմէ վերածէ զայն և թելադրէ զյօժարութին առ երկնային և հոգևոր առարկայս, զի մարդ՝ որ մինչ ցայն նուագ ատեայն զբարին, սիրեսցէ զնոյն, և ատեսցէ զչարն, զոր սիրէրն յառաջ:

Մարդ առանց այսր փոփոխութե ոչ կարէ սիրել զԱ̃ծ և ոչ զպաշտօն արժանավայել մատուցանել նմա անկեղ-

ծուլք և սուրբ սրտիւ: Ամենայն, զոր աշխարհ համարի ինչ առ Ա՟ծ՝ է մի միայն ցնորք ունայնաց և հակառակ սիրոյն Աստուծոյ, քանզի իւրաքանչիւր ոք ըստ յատկութեան մարմնական յօժարութեան, որ է "խորհուրդ մարմնոյ թշնամի է յԱ՟ծ": (15) Իսկ հոգեկան յօժարութիւն սրտի է ճշմարիտ և անսասանելի ապացուցութիւն, թէ մարդ ծնեալ է 'ի հոգւոյ, և վերածեալ 'ի մահուանէ 'ի կեանս: Այլ երբ ոմն յորդորմունք հոգւոյ, խրախուսանք և արհաւիրք, որք ոչ արտադրեն 'ի սրտի զայս կամակարութիւն հոգևոր՝ ոչ կարեն համարիլ երբ թելադրութիւն 'ի Հոգւոյն Սրբոյ, թէպէտ և հզօրագոյնս լինեն այնոքիկ:—

Գ:

Նախանձ և ձգտումն ջանից 'ի գործս բարեպաշտութեան են ևս անշուշտ շնորհալի ներգործութիւնք Սրբոյ Հոգւոյն, վասն

պայր և խելթ, զի սուրբն են հաւատարիմ ապացուցութիւնք որդեգրութ Աստուծոյ: Այս փոյթ նախանձու համոզէ զհաւատացեալս յայլ և այլ գործս, նախ՝ յաղօթս, զի այն ուսուցանելով ձեռնտու լինի նոցին յաղօթել: Ինքն Հոգին սբ բարեխօս է՝ վասն նոցա և ՚ի նոսա "՚ի հեծութիւնս անմռունչս": (16) Իրաւամբք մարթ է ասել զսոցանէ ընդ առաքելոյն Պօղոսի, թէ "Նոքա անդադար աղօթս առնեն", (17) վասն զի Հոգին սբ շարժէ զնոսա անդուլ վերամբառնալ զսիրտս և զմիտս իւրեանց առ Ած, և շնորհէ նոցա զզօրութիւն յամ նուագի դիմել յաթոռս՝ յաւիտենական շնորհացն: Նոքա ունին զսիրտս իւրեանց ՚ի վեր լնանին աղօթական զգայութբ և հաւաչանօք մաղթանաց, թէ և զայն ոչ կարեն ինքեանք դիտել, և ՚ի լինել նոցա ՚ի տարակուսանս, թէ առ ի՛նչ և զի՞նչ վայել է նոցա կալ յաղօթս՝ Հոգին սուրբ առատաձեռն պարգևէ նո-

ցա կ լ լուծ առաքելոյն և հնարէյ առ-այն, և ծնանին ՚ի նոսին " «աղօթք, խըն-դրուածք, պաղատանք և գոհութիւնք»[16]

Երկրորդ՝ հաստատեալք սովին նա-խանձու շարժին յունկնդրուլ բանին Ա. Յ: Հոգին սուրբ յուշ առնէ նոցա զբարիս զայսոսիկ, զորս ընկալանն ՚ի բանէ աս-տի, առնէ գնալս ձեռնտուութք այնորիկ սրտաջան նախանձորդս ՚ի լսել և յան-սալ նմին, և թելադրէ զայնպիսի սէր առ բանս մշանջենական կենաց, մինչ զի նոքին դառնան նոցա ՚ի բարիս ծան-րագինս, " քան զհազարս ոսկւոյ և ար-ծաթոյ": (19) Միանգամ այն և բանայ զսիրտ նոցա, զի ճիշդ մտադրութք ընկալցին և պահեսցեն զ՚ի բանէն բա-րողեալն:—

Այս նախանձ սիրոյ զարթուցանէ զհաստատեալս ՚ի հոգևոր հնկուն որք-նուն, զի ճշտիւ և զգուշութք պահպա-նեսցեն զսիրտս, զխորհուրդս, զբանս և զգործս իւրեանց. և ուշի ուշով

շիջուցեալ սպառեսցեն զիմ՛ մեղա-ռիթ ցանկութս և զպուլի մտաւուխ անդէն ՚ի մուտս անդ:—

Սովին ասելին նորա և ընդդիմակ-ցիլ և հակառակիլ ընդդէմ հոգւոյ թշնամեաց նորա, մեղաց և ամ անհը-պատակութեանց, որք տակաւին մնան ՚ի նմա, փորձուծ սատանայի և յղա-ման անձընդդէմ կարծեաց. ցրել չքա-ցուցանել զամ՛ երկբայութի և անհա-ւատութի, արմատախիլ առնել զկոր-տակման սէր և միայարուծ ընդ աշխար-հային և այլն: Հոգին սուրբ նպաստ մատուցանէ նմա ՚ի մրցման և ՚ի ժա-մու անկման վերականգնէ, ՚ի թիկունս հասանէ և զօր ամ՛ յանդիման նորա արձանանայ, և տայ զզօրութի ՚ի պար-տութի մառնել զթշնամիս զպատիկ զեռանդն ՚ի յառաջադիմութի և ՚ի, զարգացումն յամ՛ բարիս, ՚ի գիտութի Քսի, ՚ի հաստատութի ինքեանց ՚ի հա-ւատս նորա և ՚ի յառաջադիմութի ըստ

աճման 'ի բարեպաշտ կեանս 'ի փառս Աստուծոյ Արարչին և Փրկչին. 'ի հաստատուն և յանդորր ապաւէնութեան հոգւով 'ի Քրիստոս և յանվախճան սրբութեան և յարդարութեան նորա, յոր ճշմարիտ հաւատն գտանէ զկեանս և զմնունդ իւր: Հաւատացեալն տեսանէ, զի ամենայն անարատութեան իւր նման է աղտեղի և պըղծեալ զգեստու. քանզի պատուական և բարւոք գործք նորա են թերակատար և պակասաւոր: Հոգին սուրբ տայ այնպիսւոյն զվստահութիւն, զգեցուցանելով զանգին, զգերակատար և զամենամաքուր զգեստ արդարութեան Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Այս յոյս հաւատոյ 'ի փրկիչն է յաւերժական և մշտակայ երջանկութեան, զոր տացէ տէր ուսանիլ ամենայն որդւոց իւրոց, կեալ 'ի հաւատս յայս և գոչել համարձակաձայն բարբառով և հանդիսիւ ընդ Պօղոսի: „Ո՞վ իցէ՝ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած է որ արդարացուցանէ: Ո՞վ է որ դա-

տապալող ամենից է։ Քն Յն՝ որ մեռաւ, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է. և է ընդ աջմէ Այ, որ և բարեխօս իսկ է վասն մեր"։ (20)

## Ե։

Ընդ այս ներգործութիւն Հոգւոյն սբյ դասելի է նմանապէս և զհաստատութի հաւատացելոց յայնմ, թէ նոքա որդեգրեալք են Այ, ըստ բանից Առաքելոյն Պօղոսի՝ թէ նոյն "ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Այ"։ (21)

## Զ։

Հոգևոր մխիթարութիւնք, որոյ վասն և Հոգին սուրբ կոչի մխիթարիչ։ Զմխիթարիչս զայս Յն Քն եգիտ անդէն արեամբ իւրով վասն ընտրելոց իւրոց և խոստանայ պարգևել զնոյն ամի, որ խնդրէն զնա։ (22) Հաւատացելոյ յաչ-

խորհիս յայսմիկ ծնանին բազմադիմի արգելմունք և դժուարութիւնք, որք յանձինս նոցա, իմա՛ զներքինս, նոյն և յաշխարհէս յայսմանէ, զարտաքինս ասեմ։ Երբեմն մեղք նեղեալ հարստահարեն զնոսա, և երբեմն աշխարհս և սատանայ աղմկեալ շփոթեն։ Յամ՝ դիպուածըս յայսոսիկ Հոգին սուրբ պատսպարեալ զգեցուցանէ նոցա զզօրութիւն և մխիթարէ զնոսա ներքին հաստատութեամբ և սերտ հաւատով յանսահման սէր և բարութիւն տեառն։ Այսու հաստատութեամբ նոքա այնչափ զկորովութիւն զանձամբ արկանեն և զօրանան, մինչ զի կարեն տանիլ ամենայնի, "յայսմ ամենայնի՝ առաւել յաղթեմք նովաւ, որ սիրեացն զմեզ"։(23)

Է։

Կնքումն հաւատացելոց կնքով Հոգւոյն սրբոյ, զոր Պօղոս մեկնօրէն յայտնաբանէ ասելով, " որ և կնքեաց ըզ-

մեզ, և ետ զառհաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր". (24) Նո՛յն օրինակ և առ Եփեսացիս, թէ՝ "որով և դուք իբրև լուարուք զբանն ճշմարտուե՟, զաւետարանն փրկուե՟ ձերոյ, որով հաւատացեալ կնքեցայք Հոգւոյն սրբոյ աւետեաց: Որ է առհաւատչեայ ժառանգուե՟ մերոյ, 'ի փրկուլ՟ նուաճուե՟, 'ի գովեստ փառաց նորա": (25) Ընքումս այս կայանայ յայնմիկ, զի Հոգին սուրբ լուսով իւրով բանայ հանդէպ ական հոգւոց հաւատացելոյն զնորին՝ նոր հոգևոր կեանս, զհաւատն 'ի Քս՟ և զԱ՟ծային դիտաւորուն՟ս այնորիկ, միով բանիւ՝ զա՟մ երանուլ՟ նորա: Սուրբ կնիքս, որ դնի 'ի վերայ նորա՝ հաւատայուցանէ զնա և իւրում այնմիկ արժանաւորութե՟, և անհետս առնելով 'ի նմին զա՟մ երկմտուլ՟՝ նպաստամատոյց լինի նմա լինել ճշմարիտ որդի Ա՟յ, ժառանգորդ երկնից արքայուե՟ և ժառանգակից Քսի, ըստ որում Առաքեալն պարզապէս մեկ-

նէ մեզ թէ այս կնիք Հոգւոյն սրբոյ է Ճշմարտին վասն հաւատացելոց. ” այլ մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զՀոգին որ յԱյ, զի ծանիցուք զայն որ յԱյ շնորհեցաւ մեզ "։ (26) Ընդ այսորիկ նշանս շնորհաց Հոգին սուրբ կնքէ և զկնիք հաւատարմութեան և միամտութեան, զի ամ ոք, տեսեալ յինքեան զայս դրոշմ ածային՝ կարէ մակաբերել և յանձին զկալ, թէ նա է որդի Ա՟յ։—

Ը։

Առ այսորիկ ներգործութիւն, զհասկն ասասցուք՝ վերաբերի և կատարելագործութի հաւատացելոց աստ 'ի յերկրի և փառաւորութի Նոցա յերկինս։ Հոգին սուրբ ոչ եթէ ընէ միայն զհիմն գործոց փրկութեան 'ի հոգիս հաւատացելոց, այլ և հանապազօրեայ պարապմամբ ցանկորդէ 'ի նոսին և աճէ 'ի բարի վախճանն։ Ըա՛բէ. եթէ հաւատացեալք պար-

տուող լինելին պահել ինքնին միայն զանձինս իւրեանց 'ի շնորհս, ապա 'ի կարծոյ զո՛ւրկ և ձեռնթափ մնայեն յայնմանէ. բայց Հոգին սուրբ անձնադիր է նոցա 'ի նմին, և ուսուցանէ թէ զօրուէ և ամենակարողուէն Ս.Յ պահեսցեն ըզնոսա 'ի յաւիտենական փրկուէ հաւատովն, զոր նա ծնաւ 'ի նոսա վերստին և պահէ 'ի նոսին: "Որ զօրուքն իւրով Ս.Յ պահեալ էիք հաւատովք 'ի պատրաստեալ փրկուէն, յայտնեալ 'ի յետին ժամանակս": (27)

Այնպէս և Յս Քս հաւատացոյց զաշակերտս իւր, թէ Հոգին, զոր առաքեսցէ նոցա՝ ընդ նոսա և 'ի նոսին յաւիտեան ունի բնակել: "Ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան: Զհոգին ճշմարտուէ, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա՝ և ոչ ճանաչէ զնա: Բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և

ընդ ձեզ՝ եղիցի։ (28) Թէպէտ Հոգին այս երբեմն ծածկեալ մնայցէ 'ի հաւատացելոյ, մինչ զի միխիթարական և խրախուսիչ զգացումն նորին ոչ են այնչափ յայտնի երևելի նոցա, (որում՝ նոքա ինքեանք բազմիցս տեղի տան և պատճառ լինին), սակայն և 'ի դիպուածս յայսոսիկ նա ոչ յետս կայ 'ի նոցանէ ամենևին, քանզի փրկիչն եդիտ զնա վասն նոցա արդեամբք անգին արեան իւրոյ ածայնոյ և շնորհաց նոցա, զի կատարեսցէ նա 'ի նոսա զգործ փրկուե և բնակեսցէ 'ի նոսա իբրև 'ի տաճարս իւր, որպէս և ասաց ԱԾ, "Թէ բնակեցայց 'ի նոսա, և գնացից 'ի նոսա, և եղէց նոցա ԱԾ, և նոքա եղիցին իմ ժողովուրդք։ (29)

Ահա քանի մի գծագրութիւնք փրկարար մեծի ներգործութենց Հոգւոյն սրբոյ 'ի հաւատացելոյս, զնմանէ կախի ամ ինչ, առանց նորա ոչ կարէ մարդ փրկել, ծովաւ միայնով, նորին հզօր զօրուե

անդադար նորը ընծայի, խոստովանօք և առաջնորդութեամբ հնարիցէ միայն հասանել վերջնական հաղորդութեան և միաւորութեան ընդ Ա.Յ ՚ի Քս։ Ո՛վ է անձն յարգանօք, սիրով և հաւատարմութ. պարտաւոր է մերձ Ա՟ծային հոգւոյ։ Առաքեալն Պօղոս կարի ստուգիւ խրատական ստիպմանօք յորդորէ ասելով. Զ Հոգին մի՛ շիջուցանէք։—

## Մի՛ շիջուցանէք։ Ահա՛ երկրորդ մասն խորհրդածութեան մերոյ։

Բառս շիջուցանել կերպարանէ զներգործութի, որ յարաբերի աներկբայ առ հուր, զոր մարթ է բորբոքել և զօրացուցանել, այլ ընդ հակառակն չէ և դժուարին ՚նուաղեցուցանել և շիջուցանել ՚ի սպառ։ Ուստի հայելով յիմաստ առաքելախօս բանիցս՝ Զհոգին սուրբ ձևակերպի ՚ի տեսակ հրոյ։ - Աւելորդ իմն վարկանիմք մի առ մի քննել ըզ-

յատկութի հրոյ, որ իւրաքանչիւր ումեք ՚ի ձէնջ յայտնի՛ է։ Այլ զանց զվարկպարագի հանգամանօքդ արարեալ՝ ըզկարեւորագոյնն միայն ցուցցուք ձեզ սոսա, թէ Հոգին սուրբ զո՛րպիսի վերաբերութի եւ հանգիտութի ունի հրոյ յայսմ նմանութե։ Որովհետեւ ՚ի յառաջընթաց շարս բանից մերոց ձեռնարկու եղաք խիք յայս նիւթ, վասն այսորիկ աստանօր արժա՛ն դատեցաք մըտանել հակիրճ բանիւ ՚ի քննին սոցին։

1). Հուրն ունի զյատկութի լուսաւորելոյ։ Ուրանօր գտանի հուր՝ անդ երեւի եւ լոյս. ամ ինչ լուսաւորի այնուիկ, մերժի խաւարն եւ ամ իր յանդիման աչաց ցուցանի յիւրեան բուն տեսակի։ Զնո՛յն իմա՛, զի ուր ուրեք Հոգին սբ ներկայանայ՝ անդ եւ Ածային լոյս նորա լուսաւորէ զխաւարեալ միտս, զկուրացեալ եւ զմոլորեալ սիրտ մարդոյ, առ նովաւ չքացեալ՝ աներեւութանան ամ կանխակալ նախապաշարմունք, ոպ

մեզ առ Ճառագայթիւք արեգականն: Մարդ, որ լուսաւորեալն է լուսով Հոգւոյն սրբոյ՝ ՚ի սկզբան անդ գիտէ զԱ̃Ծ, զՔ̃ս, սմանէ զինքն, և զգայ զտկարութի̃ և զմեղապարտութի̃ իւր, ըստ որում ցուցաւ ՚ի վերոյ:—

2). Հոգին ոչ միայն ինքնին է մաքրագոյն սուրբ, այլ ունի և զմաքրիչ յատկութի̃, զոր տեսանեմք ՚ի հրաշալեալ իս մաքրագործեալս հուրբ:- Այսպէս և Հոգին սուրբ հաւատով մաքրէ զսիրտ ՚ի գարշ աղտեղութե̃ մեղաց, և արեամբ Ք̃նի ազատէ նա և ՚ի դատապարտութե̃ նոցին: Նա սրբէ զհաւատացեալս ՚ի Ճանապարհի բարեպաշտ կենաց յամ՛ մ՛լթացնութե̃ մարմնոյ և հոգւոյ, և թեւարկէ նոցա լինել սուրբ ՚ի Քրիստոս Յիսուս:- (30)

3). Հոգին ունի և զջեռուցիչ յատկութի̃, զի որք նեղեն ՚ի ցրտոյ՝ այնու ջերմանին: Այդ՝ Հոգին սուրբ ոչ սակա-

քէն ջեռուցանէ զսիրտ եղկելի մեղաւորի, երբ նա հեղու 'ի հոգի նորա ըղսէր առ Քն և բորբոքէ նովիմբ ըղսիրտ նորա. մի թէ ոչ զգայ անձին նա զնոյն իսկ տենչ և զեռանդն, զոր ըղկացին աշակերտք Քնի յասելն ցմիմեանս, „ոչ իսկ և սիրտք մեր ջեռլ էին 'ի մեզ, մինչ խօսէրն ընդ մեզ“: (31) Որպիսի եռանդագին և բոցակէզ սէր լցուցանէ զհոգի, երբ Հոգին սուրբ շնորհէ նմա զհաշտութի ընդ Ա.Յ, և տայ նմա հաւատալ աներկբայ, թէ որդեգրեալ է նա Ա.Յ: Որպիսի բոց սիրոյ, գոհութ, օրհնութ և փառաբանութ վառի յայնժամ 'ի սրտի հաւատացելոյն:—

4). Հուրն կակղացուցանէ և հալէ լուծանէ զկարծրանիւթ կուռ մետաղս, խրինձ և երկաթ աղդու զօրութ այնորիկ լինին հեղեղուկ իբրև զջուր. Նոյնպէս և Հոգին սուրբ կակղէ զսիրտ մեղաւորի: Սաղմ", ծա. 15. որպէս բըղջո–ր հէշդյ: Որպիսի վէս և յաւակն իցէ

նա՝ Հոգին սուրբ կարէ հնազանդեցուցանել, և խոնարհել զնա յերկիր առաջի Տեառն Ա.Յ. որչափ ջանզգայ և քան զքար կարծրագոյն էյէ սիրտ նորա՝ Հոգին սուրբ կարէ զայն այնչափ կակղացուցանել, մինչ զի, զհօսանս արտասուաց հեղցէ շարժելեալ մեղաւորն:—

5). Հուրն կիզու և սպառեալ ծախէ զկիզանուտ նիւթս, որք շուրջ զայնու գտանին, և այնմիկ ինչ ոչ կարէ զդէմ ունիլ. նոյնպէս և Հոգին սուրբ 'ի չիք դարձուցեալ բնաբարձ առնէ 'ի սրտի մարդոյ զամ̃, որ մեղս պատճառէ: Ուր Հոգին սուրբ գտանի՝ անդ մեղք պարտին 'ի կորուստ լինել. նա ազատէ զսիրտ 'ի զօրուէ̃ և յիշխանուէ̃ մեղաց, և չքացուցանէ զամ̃ յարակցուն ընդ աշխարհիս, և զհակամիտուն առ հպարտութին. նա արմատախիլ առնէ զամ̃ մարմնական տռփանս, կորուսանէ զփորձ թշնամւոյն, և ստիպէ զնա ա-

մտանեմք հրաժարել 'ի նմանէ:—

Զ). Այլ դժուարն, ո՛չ չար և ուժգնագոյն այն՝ մարթ է շիջուցանել, առաւելն օրինակաւ և Հոգին սուրբ յա՛մ շնորհալի ներգործութեամբ իւր, բացամերժել, խաւարել և 'ի վերջոյ շիջանել կարէ. վասն այսորիկ սրբազան Առաքեալն Պօղոս աղաչէ զՀաւատացեալս, որք 'ի Թեսաղոնիկէ համօղակեր բանիւքս, թէ զՀոգին մի՛ շիջուցանէք:

Որք 'ի գործ ածէ ասացուածս՝ մի՛ շիջուցանէք, խօսելով զՀոգւոյն սրբոյ՝ ասել գիտելի՛ է, զի ո՛չ վասն Էութեան, այլ շնորհալի ներգործութեանց և զօրութեանց նորա ասացաւ. իսկ շիջուցանեն զնա այնոքիկ, որք անզգուշութեամբ հակառակին ներգործութեանց և զօրութեանց նորա և անխոհեմութեամբ դիմադարձ լինին նմա, և այսպիսի մեղանչեն վասն ո՛չ միայն ծնեալքն յանհաւատից. այլ և 'ի հաւատացելոց իսկ: Արդ՝ խոյս տուեալ յերկարաբանութենէ խօսեսցուք 'ի կարգի

զտայանէ, որ նախ՝ զփրկարար ներգործութեան Հոգւոյն սրբոյ, և ապա՝ զմխիթարական զօրութեան Նորին։

Առաջինն վերաբերի առ գոյութիւն շնորհաց, իսկ միւսն առ շնորհալի ներգործութիւն կամ կիրառուն Նորին։

Նոյն՝ առ փրկական ներգործուխս Հոգւոյն սրբոյ, որք բաղկացուցանեն ըզգոյութի շնորհաց՝ վերաբերին լուսաւորուն մարդոյ 'ի ճանաչել զԱծ և ըզնոյնինքն, զ զջունն, հաւատ 'ի Փրկիչն Քսն, վերածնութի և փրկութի։ Յայսմիկ ներգործուխս յանհնարին է շիջուցանել զՀոգին սուրբ. զի նա ներգործէ առ իբրև զ հոգին Քսի, տուեալն մարդկան մահուամբ Նորա. և երբ Յն Քս պարգևէ զնա ողորմելի մեղաւորին, յայնժամ ներգործէ նա արարչական զօրութբ, որում ոչ ինչ կարէ ընդդիմանալ։ Նա ներգործէ միայն 'ի վերայ մեղաւորի, որպէս մտաւոր արարածոյ. նա ոչ ձգէ զնա 'ի դարձ հակառակ ցանկութ և

կամաց նորա, այլ լուսաւորէ յաւուջ
զմիտս նորա, մինչ սկսանի նա տեսա-
նել զկասկած մեծի արկածից իւրոյ և
զկորստական վիճակ իւր մեղապարտ՝
սրտին աղաղակ ծնանի ՚ի նմա և ան-
հանգստութի մեծ և հոգացողութի վասն
փրկութե հոգւոյ իւրոյ. կամ՝ք նորա սաս-
տկին պարապիլ ՚ի փրկութե, հետախոյզ
լինիլ հնարից առ այն, ուսանիլ զայն
և հարցանել. " զի՞նչ պարտ է ինձ առ-
նել՝ զի ապրեցայց": (32) Յայնժամ Հո-
գին սուրբ ցուցանէ նմա, թէ որպէս
պարտ է վարիլ ՚ի գիւտ զթութեն Ա.Յ՝
ածէ զնա առ Ա.ծային փրկիչն, շնորհէ
նմա զհաւատ ՚ի Նա և հաւատացուցա-
նէ զնա, թէ Նա ՚ի պատրաստի է փրկ-
կել զնա, որ գայ առ Նա, նորոգէ ըզ-
սիրտ նորա ճանաչել զսուրբ և զերկ-
նային բարիս և սովին օրինակաւ մեղա-
ւորն լինի "նոր արարած ՚ի Յս Քս,՚ի
ձեռն Հոգւոյն սրբոյ":

Ներքոյ՝ են և այլ շնորհալի զօրութիք

Հոգւոյն սրբոյ, որք պատկանին 'ի կի-
րառումն, կամ՝ 'ի լծեղադրութեան հոգևոր կենաց և 'ի զօրգայութիւն յայնմիկ. ը. որս մարթէ դասել զզգայութիւն հոգեկան խաղաղութն, զխրախուսանս յԱ՟ծային որդէգրութ՟ն, զուրախութ՟ի 'ի Հոգին սուրբ, զկացութիւն սիրոյն Ա՟Յ և նախանձու շա-կութիւն յաւիտենական կենաց այլովքն համդերձ: 'Ի ներգործութիս յայսոսիկ և 'ի նմանս նոյին՝ Հոգին սուրբ կարէ շիջանիլ և 'ի հաւատացելոյ: Սակայն այս շէջումն պատահի ոչ միայն յան-դարձս, այլ և 'ի դարձեալս և 'ի ճըշ-մարիտ բարեբանեալս իսկ, ըստ որում՝ թեսաղոնիկեցիք,

Չի՛ք ամենևին 'ի մարդկանէ, որք աստ յաշխարհիս, և ոչ մի՝ որ ոչ են-թարկիցի ընդ բաժանմամբս, զի ա-մենևին են դարձեալք կամ՝ անդարձք, վերածնեալք կամ՝ բնածինք, հաւատա-ցեալք կամ՝ անհաւատք: Ընդ անդարձս և անհաւատս թուելի է զամենսեան ը՟

բնութ. քանզի ի ծնեալքն 'ի հոգւոյ՝ հոգևորքն են,
թէ սոյնպիսիք ըստ մարմնոյն խորհին, զի
խորհուրդ հոգւոյ կենդանութիւն է յԱստուածոյ։
Ողորմելին, որք գտանին յայսմիկ խղճա-
լի վիճակի՝ 'ի կորուստ լինին յայն-
միկ, եթէ չ՛դարձցին սրտի մտօք 'ի
սահմանեալն մեզ գթուքն Այ ժամա-
նակի։ Ընդ բաժանմամբս ըն այսուիկ
անկանին և այնոքիկ, որք անուանին
Քրիստոնեայ, բայց տակաւին չեն վե-
րածնեալք շնորհօք։ Արդ՝ Հոգին Այ
կամի, զի զանկեալ մարդկութիւն, որ
գտանի յամենամոլար և յարատաւոր
վիճակի, հանցէ 'ի կորստենէ, դարձու-
ցէ յուղի ճշմարտութ, և վերածիցէ 'ի
մոլորութէ դարձուցանելով առ Ած 'ի
ձեռն Յսի Քսի։ Եթէ մեղաւորն ոչ
դիմակայեսցի Հոգւոյս, այլ գայցէ ըղ-
հնազանդութբ և տայցէ զինքն նմա ծը-
նանիլ վերստին և դարձուցանել, ապա
անցցէ նա ընդ այլ բաժանումն մարդ-
կան, բարեբանելոց, դարձելոց և հա-

ւատացելոյն ամեն։ Ա.հա՛ որք կարեն չիջուցանել զհուրն, խսկ մի անդադարելոյ պատուհասոյն ևս է ասել, թէ նոքա ընդդիմանան Հոգւոյն քան թէ շիջուցանեն զնա, վշտաքնեն, վատաբանեն և տարադրեն յանձանց իւրեանց։ Քանզի բազում չիջուցանէր որ առ հուր յարաբերի՝ կանխաւ ուրեմն առհմանէ և նշանակէ, թէ հուր Ճշմարտի քս, սակայն յԱ.ծաշունչ գիրս ոչ ուրեք ասի, թէ Հոգին սուրբ բնակեալ իցէ յանդարձըս, այլ միայն հաստատի, թէ նա ներգործէ 'ի նոսա յորդորանօք և աղդեցութք 'ի խղճմտանս նոցա, թևակոխել” փոյթ 'ի մէջ առնու ածել զնն 'ի դարձումն, միայ ընդ նոսա ըն օրինակին ըն այնմիկ, որպէս 'ի սկզ բանն ասող զօրմէ և նոքն Ա.ծ վկայէ յասելն,” մի միացէ ոգի իմ 'ի մարդկանս յայդմիկ յաւիտեան. զի լինելոյ դոցա մարմին։’

(33) Եւ.Հելմասայ թէ,, նոքա հեւ-

տեցին, և բարկացուցին զՀոգին նորա սուրբ. և դարձաւ նոցա տէր 'ի թշնամութիւն, ինքնին տէր ետ ընդ նոսա պատերազմ." (34) Իսկ փրկիչն մեր Յիսուս Քրիստոս զՀոգւոյն սրբոյ ասէ 'ի խոստմանալն առաքել զնա, թէ "նա եկե՛լ յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղաց": (35) Օնոյն օրինակ և Ստեփաննոս յանդիմանեաց զՀրէայս վասն ներհակութեան նոցա Հոգւոյն սրբոյ, ասելով" խստապարանոցք և անթլփատք սրտիւք և ականջօք: դուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք, որպէս հարքն ձեր, և դուք": (36) Սակայն Հոգին սուրբ՝ որպէս 'ի վեր անդըր ասացաք, նա և յանդարձ կամ 'ի կեղակարծ քրիստոնեայս անդադար ներգործէ առ այն վախճան, զի հանցէ ըզնա 'ի կորստական վիճակէ նոցին, և զայս կատարէ նա զանազան հնարիւք:—

Նախ՝ յառաջ քան զգործելն զմեղս կամ զպատուիրանազանցութիւնս, նա

այնպիսի մեղաւորին 'ի յուշ ածէ և 'ի սիրտ նորա ; աղաղակէ. "մի՛ տանիր զայդ, զի զանց արարեալ զօրինօք մեղս գործես, դու այսու վշտացուցանես զՏ.Ծ, կորամբուն նորա ածես և կուտակես 'ի քո վերայ, հերքեալ և ցրեալ զդիտաւորուն̄ քո յանցաւոր, եթէ ոչ՝ ապա յայս սակս պատիժս պատուհասից կրեսցես 'ի Տեառնէ": Արդեամբ զխիղճ մտաց նորա զարթուցանէ սրպխսի և իւր ատացուածով բանին Տ.Յ, և այն այնքան ուժգին տպաւորէ 'ի սիրտ նորա, մինչ զի նա զաչէ հարեալ նովին տագնապի 'ի մեղաւորուն̄ իւրոց դիտաւորուն̄ և ածի յաղմուկ շփոթից: Հոգին սուրբ հանէ զնա 'ի մեղաց նա և 'ի ձեռն հաւատարիմ ծառայից Տ.Յ, երբ նոքա 'ի քարոզս իւրեանց բացերեակի 'ի դէմս ածեալ յանդիմանեն զմեղս, որք մոլորեցուցին զնա կամ առանձինն նախազգուշացանեն զնա յայնցանէ: Նա երբեմն առաքէ նմա

զնոյնօրինակ համաղմունս և ընդձեան ծնողաց նորա, այլ գանձուց, բարեկամաց, ծանօթից, և այլ ազգապէս եղանակօք:—

Իսկ եթէ մեղաւորն զայս ամ յորդորս խրատուց Հոգւոյն սրբոյ համարի յոչ ինչ, յանհոգս կայ զղջմանց և դարձեալ ՚ներհակի այսոցիկ և գործէ ընդդէմ խղճի մտաց իւրոյ զմեղս, որք հակառակ են նմա, ապա շիջուցանէ նա զՀոգին Ս. Յ, հեռացուցանէ զնա և ՚ի բաց վանէ յինքենէ: Եւ ՚ի կալ նորա ՚ի նմանէ յետս, իբրև զժբաղդն այն յքանի, կորնչի անշուշտ: Իսկ արդ՝ ո՞վ միւս ևս զարթուցէ զնա, ո՞ կարասցէ դարձուցանել զնա, և ազատել յիշխանութե մեղաց, եթէ Հոգին Ս. Յ հրաժեշտ տայցէ և չհաճեսցի առնել զայդ: Աստուստ մարթ է ՚ի միտ բերել ըզսոսկալի բանն Տ՟ն, „Թէ վայ է նոցա, մարմին իմ ՚ի նոցանէ. (37) և մի՛ մնասցէ ոգի իմ ՚ի մարդկանդ յայդմիկ“:—

Ներքուստ՝ ՚ի ժամանակի մեղսագործութեան, կամ ՚ի պարապել մեղաւորին ՚ի նմին։ Երբ մեղաւորն, որ անուանի քրիստոնեայ՝ ոչ կամի թողուլ զարատաւոր վարս իւր, Հոգին սուրբ միանգամ եւս բաղխէ զդուռն սրտի նորա, ոչ միայն ցուցանելով նմա զմեծ արատութիւն կենացն, այլ եւ գուն գործելով տպաւորել զզգացումն մեծի սիրոյն Քսի փրկչին, որ տարաւ այնչափ անտանելի չարչարանս, եւ մեռաւ վասն նորա։ Նա առաջադրէ նմա զհարցումն, թէ ո՛ մեղաւոր, մի թէ ա՞յդ իցէ գոհունակութիւնդ. զոր պարտիս հատուցանել Յսի Քսի փրկչիդ վասն կրելոյն նորա չարչարանաց, վիրաց եւ մահու, զի կամովին մեղանչես ընդդէմ նորա։ Պատկառեա՛յ ՚ի չարութենէդ եւ յապերախտութենէդ։ Մի թէ ո՞չ կարես վասն սիրոյդ առ նա յետս կալ յմեղքէ, թողուլ ինչ. խորհեա՛ց զիա՛րդ փրկեսցիս, եթէ չո՛ւնիս զայսպիսի բարիս։ Նոյն Հոգին սուրբ ՚ի յուշ

բերել նմա այլ ևս զմին, զ՚ի տառապանսն և զթշուառսն ի յանխնականութենէն, զի դադարեցուսցէ զնա և ոճիւ հանդերձելոյն կատակուցէ ՚ի մեղաց:

Նորա՝ զկնի մեղանչելոյն, կամ ՚ի կատար հասուցանելոյն զ յանցաւոր դիտաւորութիւն: Նա խրատէ զմեղաւորն դէմ յանդիման ցուցանելով նմա ըզգարշ աղտեղուն կենցաղավարութեն նորա, կարեկցական բանիւքս, որպէս Նաթանն թէ՝ զի՞նչ գործեցեր զայդ: Հայեաց և տես, մեղք քո բողոքեն առ Ած: Ահա ոչ արդեօք յիմարութի է մեղեգին վն այդքան շնորհսկո առնելոց այնչափ ամօթալի պադշոտ տափանացդ և վայելելոյ յայդքան դիւրանդինեալ հեշտութես անկանիլ ՚ի կորուստ յաւիտենից: Դարձ և թող զճանապարհ մեղսագործութեդ ո՛վ մեղաւոր անձնահաւան, ընդէ՞ր կամիս մեռանիլ ինքնին: Ահաւասիկ մերձ է Դատաւորն. Նա արասցէ դատ և պատժեսցէ զքեզ վն այդպիսի անիրաւութեդ:-

Այսու օրինակաւ և այլովք բազմօք Հովիւ սուրբ յորդորէ զմեղաւորս, կրկին գայ, բնակի և վարի ՚ի նոսա առ ՚ի նախապատսպարել զնոսա յա՛մ չարեաց այսոցիկ:—

Որոց ՚ի յիշելոյս Հովիւն որք ՚ի կերածէ և զայլ ՚նորս առ ՚ի զկամակոր և մեղօք զթաւալեալ մեղաւորն շարժել և զարթուցանել, զորօրինակ՝ լծ յլոայ գոլ, հատանել մաշկաւ ժամանակեց և այլոց պատուհասից և չաւոյ, ապաքէն յառաջ քան զնախատահմանեալն ժամանակ զմահ վաղահաս, կամ դրաւելով ակն յայտնի ՚ի վտանգօք ըղկեանս նորա, ենթարկէ ՚ի նմին և զհոգի նորա կորստեան: Արդ՝ ո՞չ արդեօք պատահարքս այսոքիկ պարզապէս և ակնընդերևս յառեն նմ՛ա, ”ո՛չ՝, ո՛վ մեղաւոր հոգեկորոյս փութա՛ փրկել զհոգիդ“:—

Իսկ երբ նա ոչ յորդորանաց, յիշատակութեց և հրաւիրացս չ՛անսայ և ան-

գոսնէ զնոսին, և ա՟մ մեղսալի հնարիւք ջան դնէ զսիրտ իւր փակել և խլացուցանել զլսելիս սրտի իւրոյ առ 'ի չտալ ձայնիս այսմիկ լսելի լինել, զընալով յանդորրու է արատաւոր ճանապարհ իւր, յայնժամ նա Հոգւոյն ս՟բյ հակառակ կայ և վշտացնէ զնա: Չե՛ն ինչ զարմանք, թէ Հոգին ս՟բ 'ի վերջոյ թողու զայնպիսի մեղաւորն և մեկնի 'ի նմանէ: Յայսմիկ վիճակի մեղաւորն անկանի ընդ դատաստանաւ ըստ խստութե՟ն և յամառութե՟ն իւրում, սակաւ առ սակաւ կորուսանէ զա՟մ յորդանս առ Ա՟ծայինս, խստապարանոցութ՟բ ը՟նդդիմաբանէ բանին Ա՟յ, ըմպահ կեալ ընդ խաղ արկանէ և ապա կոր 'ի գլուխ անկանի յանդունդ յաւիտենական դատապարտութե՟: Ո՛վ սոսկալի վիճակիս և ահռելի կատարածիս թըշուառութե՟: Ահա՛ հետևանք և պտուղք ընդդիմադարձութե՟ Հոգւոյն սրբոյ:—

Սրբազան առաքեալն Պօղոս ո՛չ առ

ոնդարձս և եթ, այլ և առ Ճշմարիտ հաւատացեալս աղաղակէ, թէ մ՛ շի-ջուցանէք զՀոգին: Թեսաղոնիկեցիք, ա. ե. որս գրէ նա վ՟այս՝ էին ընտրեալք, և ՚ի նմ՟ աւետարանի մայր հաստատուն, նո-քա եղեն հետևողք Ք՟րի և հաստատե-ցան ՚ի հաւատս նորա մինչ զի Առա-քելոյն եղան յօրինակ այլոց ամենից հաւատացելոյն ՚ի Մակեդոնիա և Ա-քայիա:- Սուրբ գիրք զայսպիսի հաւա-տացելոյ վկայէ, թէ "Հոգին սուրբ ՚ի նոսա բնակէ, կեայ և ներգործէ, ածէ զնոսա առ բարիս և ՚ի նոսա յաւիտեան մնայ": (38) Վասն այսորիկ և այս գո-չումն առաքելոյն վերաբերի առաւել ևս առ նոսա: Ոչ զՀոգին սուրբ ընդ-պարգևեալն հաւատացելոյ, զՀոգին, զոր եղեն վասն նոցա Ք՟ս մահուամբ իւրով՝ հաղորդէ նոցա փրկիչն ՚ի յա-ւիտեան, որոց վասն հաստատապէս ասէ նա, զի ընդ "ձեզ բնակեսցէ ՚ի յաւի-

տեան": (39) Զի ոչ առ ժամանակ մինչ առաքի նա և անցանէ, - ոչ, նա է Հոգի, որ կայ և մնայ յաւիտեան: Այժմ է նա արար զսիրտ հաւատացելոյն ին-քեան բնակարան, ապա մնայ 'ի նմա ան-փոփոխապէս հանապազօր, յորդ 'ի ասկս և ասէ, "Ա.Յ հոգին 'ի վերայ ձեր հանգուցեալ է", (40) Դուք հոգւով սո-վաւ կնքեցարուք յաւուրն փրկութ, (41) և ետ զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր", (42) և յաւուրն յետնում Ա.Ծ յա-րուսցէ, "կենդանացուսցէ և զմահկա-նացու մարմինս ձեր բնակեալ ոգւովն նորա 'ի ձեզ": (43) Այս ծմ ապացու-ցունք հաստատեն, թէ Հոգին Սբ երբէք ոչ թողու զՃշմարիտ հաւատացեալ", նա և ոչ յայնժամ, երբ նոքա անկարութ կամ անգիտութ անկանիցին 'ի յանցանս մեծամեծս. "Հոգին 'ի թիկունս հասանէ տկարութես մերում",(44) զոր յայտնապս տեսանեմք 'ի վերայ Դաւթի, յորում Մնայր Հոգին Սբ, թէ և նա գործեաց ըզ-

մեղս մեծ, վասն որոյ նա ապաշաւելով աղօթէր յասելն, "զՀոգին քո սուրբ մի՛ հաներ յինէն": (45) Քանզի անզեղջ են շնորհքն և կոչումն Ա.Յ: Բազումք յորդւոցն Ա.Յ ո՛չ սակաւ թերահաւատութեամբ իւրեանց տանջին երկիւղիւս այսուիկ: Նոքա տատանեալ սարսին, զի ո՛չ իմանան զմխիթարութիւն և ո՛չ զգան յանձինս իւրեանց զմեղաց տկարութիւն ինչ հակառակ կամացն իւրեանց, և զայս ընդունին յապայութեան, թէ զրկեալ են 'ի Հոգւոյն սրբոյ: Աւա՛ղ, այս ենթադրութիւն բազմի՛ցս ածէ զնոսա 'ի յուսահատութիւն: Այլ սոքին 'ի մխիթարութիւն իւրեանց պարտին հաւաստի լինել, թէպէտ ո՛չ զգան յանձին երբեմն զմխիթարական և զխնդալից ներգործութիւն Հոգւոյն սրբոյ՝ թէ նա բնակի 'ի նոսա, և յիւրում ժամանակի վերստին երևեսցի նոցա Հոգի մխիթարութեան:-

Արդ՝ որով հետև 'ի բանիցս իմանի, թէ՝ այլ և ճշմարիտ և ուղղադաւան

հաւատացեալք կարեն շիջուցանել ըզ-Հոգին, ապա ընդ սով են պարտէ կիւել-նա և զշնորհալի զօրութս, յորդորմա-ն ի զթեւադրութս 'ի բարին, իսկ ըստ իմիք զմխիթարական, ուրախալից և կենդանարար ներգործութս նորա, և զորս յայնցանէ յառաջ գան. իմա՛ ըզ-քաղցր և զհաճելի զպտուղսն, որք հաւատացելոց անշուշտ պիտոյ են, զի հաստատուն, անվրէպ և յաջողակի գնասցեն զճանապարհ սրբութ և փըր-կութ:

Հոգին սուրբ կրկնատեսակ կարէ շի-ջանիլ 'ի հաւատացելոյ, այ՛` 'ի նախն իսկ, և յայլս:-

Ա. Հոգին սուրբ շիջանի 'ի հաւատացելոյ:

Նախ` երբ նոքա զընկալեալ շնորհս չ'ճանաչեն և մոռանան զայն ապերախ-տութբ, թէ և անհակառակելի ապա-ցուցութք Ածային բանին հաստատեն, թէ նոքա ճշմարտապէս դարձեալ էին

առ Ած, սակայն զանձն հարկանեն իւրա յուցանել զայն ինքեանց և գոհանալ երախտագիտութ̅ զԱծ։ Նա և ՚ի միջի հաւատացելոցս այսոցիկ այնպիսիք, որք անընտրաբար խորհին, թէ յարակցութիւնն յայսմ երկրայութեն է վայելուչ եղանակ պահպանելոյ զինքեանս յաւելորդ հաւաստութե և կալոյ յանգ բաղ ապահովութե, այլ ոչ խոկան և զայնմանէ, թէ այնպիսի երկմտութ̅ զմեղս ծանունս գործեն առաջի Այ. զի այնու ուրացեալ ժխտեն զստացեալն ինքեամբք ըզշնորհս Ածայինս։ Նոքա ոչ գիտեն նա և զզօրութիս ճշմարիտ հաւատոյ, զներգործութիս ընդդալից վայելչութե և զհաստատուն շնորհացն։ Ընդհանրաբար գիտութիս վայելչեալ բարերարութե է պարտիք գոհութեան, իսկ ը̅ հոգևորականին այս պարտաւորութի առաւել ևս է, ընդունիլ յԱյ զշնորհս բարեաց և չճանաչել զայն, նոյն է որպէս թէ անշնորհութ̅ ուրանալ զայն։ Ոչինչ կարէ

մինչեւ զնա հասուցանել զքրիստոնէի, որչափ անհաւատալին, պատճառանօք յանձնառուին, եթէ լծէ երկեան խաբել-պյու և 'ի պատրանս դժրանայ անկա-նել անեւլորդ յուսով, որք ոչ կարեն տալ զխոստմունս արդարուե։ Ճշմարիտ հա-ւատն ունի յինքեան զնշանս, որովք միշտ մարթ է որոշել զայն յայլ ում՝ մոլար և առաջօք ձեւացեալ երեւութից։ Արդ՝ եթէ զայն ոչ քննես և զշնորհս ոչ ճանաչես, ապա Հոգին սուրբ այնու վշտանի. քանզի զայն նա շնորհեաց մեզ և ծնաւ 'ի մեզ վերստին։ Ահա՛ ընթերցող, սոյնպիսի զլուսամբ շը-նորհայն շիջուցանեմք զՀոգին։

Երկրորդ՝ շիջանի նմանապէս Հոգին սուրբ, երբ մարդ ոչ շատանայ և հաճ լինի շնորհօք, զորս ընկալաւ, և ոչ գոհանայ վասն այնորիկ զԱծ, այլ չա-րակնունք հայի միշտ յայլ, որ ըստ կար-ծեաց նորա՝ աւելի վայելէ 'ի բարիս։ Այս մեղք բազմիցս վարակէ ախտիւ

մախանաց զգրիտոնեայս, զի նոքա զվիճակ իւրեանց բաղդատելով յաւէտ ի̅ այլոց, զի՛ հատեն: 'Ի պատմել ուրուք, թէ ի̅ ա՛րպխի Ճանապարհս Հոգին ս̅բ ածէ զնա 'ի գխաւլ մեղաց խորոց և 'ի հաւատս 'ի Յ̅ն Ք̅ն, մեք նոյնհետայն ուշ 'ի կուրծս առնեմք. " թէ սուտ խօսհիս, որպէս թէ Հոգին սուրբ այդպէս առաջնորդեալ լիցի քեզ և դու այնքան յայտնապէս և ազդու զգացեալ իցես զայս, ասելով՝ մի թէ յուղին Ճանապարհի գտանիս". կամ զմտաւ ածեմք". ո՛վ. եթէ ուղղածէր և զխ նոյնպէս Հոգին Աստուծոյ, ապա հաւատայի, թէ ներգործութիւնդ, զոր դուդ զգաս՝ է Աստուածային: " Եւ ապացուցութիւն մեր հիմնի յայնմիկ, թէ համարձակիմք դատել և նմանացուցանել զիմաստութի՛ւն Ա̅յ 'ի զօրութիւն նորին, յորմէ զհետ գայ, թէ մեք անբաւական և անգոհունակ եմք զներգործութեանց, Հոգւոյն ս̅բյ. վասնորոյ փոխանակ զ

զգոհութիւնս մատուցուք նմա 'ի բո-լոր սրտէ վասն սակաւ բարերարութեան, որոնցմէ մեք զբարութիւն և զիմաստութիւն նորին, իբրև թէ բարւոք գիտեմք, թէ զխորդ պարտի նա վարել զմեզ 'ի սրբութիւն և 'ի փրկութիւն: Ոչ միայն, նա և զսակաւամանեայ հոգեկան բարերա-րութիւնն ընկալնու մարդ առանց ամենայն արդեանց, այլ և ոչ ըստ արժանաւո-րութեան, այլ ըստ ողորմութեան միայն սակս Յիսուսի Քրիստոսի պատարագին, որ պարտիւր շայ-ժել զնա 'ի շնորհակալութիւն վասն մանա-ւոր նշանաց շնորհայն և ներգործութեան Հոգւոյն Սրբոյ: Սակայն զի ունի զչարա-կնութիւն և նախանձի, գիտելով որքան գթած է Աստուած և պարգևէ այլոց աւելի քան թէ նմա՝ նորին աղագաւ դժուա-րացուցանէ ինքն զճանապարհ իւր և խոչնդոտ լինի յառաջադիմութեան իւ-րում 'ի բարեպաշտութեան. զի ասէ Տէր, պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս՝ և անդ է ճանապարհ, ուր ցուցից

նմա զփրկուն̃ իմ»: (46) Իսկ եթէ
զժողովուրդ չքնքիս ապերախտ և անշնոր-
հակալքս և դատապարտես զխնամատուն
Հոգւոյն սրբոյ ՚ի շնորհաբաշխութիւնս, ա-
պա մեղանչես առաջի Նորա և սովիմբ
չինջուցանես զՀոգին :—
Նշխարք՝ նոքա անհաւատուք անգոսնեն
զվկայութի Հոգւոյն սրբոյ որ վասն
Ա̃ծային որդեգրութե̃ն: Ոչինչ կարէ այն-
քան զքրիստոնեան հաստատել և շար-
ժել ՚ի ծրաջանութի ՚ի ճանապարհ բարե-
պաշտութե̃, ոչ̃ հաւատալն ընդունելու̃
շնորհաց: Որչափ նա առաւել զգայ քրի-
քեան զերկրպագութիւն, այնչափ սակաւ յա-
ռաջադէմ լինի ՚ի քրիստոնէութե̃. և ըստ
հակառակն որքան առաւել ունի զհաւա-
տըս մը հաղորդակից լինելոյն իւրոյ շնոր-
հացն. Ա̃յ, այնքան առաւել զգացէ
զփոյթ և զցանկալի ՚ի փառաբանել
զշնորհատուն Ա̃ծ և ունել զբարե-
պաշտ կեանս: Քրիստոնէին հաւատալն,

թէ որդեգիր է Այ՝ այնպէս կարեւոր է, որպէս զապաւինակն մաքրութեան կազ-մածոյ ժամանակին, յորժամ թէ ՚ի բաց բարձցես զայն՝ ամ՝ ներգործութիւնն եւ շարժումն դադարեսցէ: Որչափ սակաւ ինչ հաւատոյ, այնչափ եւ սակաւ երեւեսցին այնպիսի թերահաւատոյն ներգործութիւնք շնորհաց: Սմին իրի եւ Հոգին մք ներ-գործէ ՚ի հաւատացեալս տեսլի առ այն փախճան, զի հաւատացուսցէ եւ սա-պեսցէ զնա յայնժամ, թէ նոքա ընկալան զշնորհս եւ զորդեգրութին ՚ի փրկիչն Քս- Սրբազան Առաքեալն Պօղոս պարզապէս յանդիման առնէ զայս բանեալս թէ՝ « Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մե-րում, եթէ եմք որդիք Այ»: Յայս-մանէ հանէ զմխիթարական եզրակա-ցութի, եւ« եթէ որդիք, ապա եւ ժա-ռանգք. ժառանգք Այ՝ եւ ժառանգա-կիցք Քի». Է այս յարէ եւ զայն, թէ՝ «այլ այսմ է ամի՝ առաւել յաղթեմք նովաւ որ սիրեաց զմեզ»:(47)

Իսկ արդ՝ եթէ անհաւատութիւն կամ վհատութիւն ներհակիս այս ներգործութեան Հոգւոյն սրբոյ և յայտնի ապացուցութեանց որ յուսալ ոչ հաւատալ, ո՞չ արդեօք ապա շիջուցանես զնա: Աներկբայ: Ահա այս է պատճառն, որով 'ի վերջոյ բազումք անկանին 'ի չարիս թշուառութեան և յայլ և այլ դժուարութիւնս:—

